

Ն Ե Ր Շ Ն Ջ Ո Ւ Մ

Երբ երազանքն յուշիկ սիրոյ տենչով թրթռայ,
Կ'երգեն բառերն արբշիւ, համերգի պէս անմահ:
Ներշնչումին հրգօր, արեւին դէմ ծաղկած՝
Յուշերն հողի կ'առնեն, կը թեւածեն յանկարծ:

Ակերու պէս յստակ կը կարկաչեն վանկեր,
Ալիք ալիք կ'երթան վանելով մութն, ըստուեր:
Սիրտն անբառի նըման կ'արձակէ բոյրն իր բարկ,
Ուր կը սկսին մնչել յանգերն իրբեւ տատրակ:

Իւրաքանչիւր պատկեր ծխածանի պէս վառ՝
Կը փայլելով յոյզին երանդներով անմար.
Ու կ'ընդթող սրտին կը դալալէ դարձեալ
Կանչն հեռաւոր ու քաղցր տարիներուն անցեալ:

Մերթ վերացման բիւրեղ ակնադրիւրին, սակայն,
Կը մորմոքին բառերն, ու շիթ առ շիթ կու լան.
Տարակոյսներ, կարօտ ու կեանքն իր յորձանքով
Հեղեղի՛ պէս կ'իջնեն իւրաքանչիւր տողով:

Բառեր առոյգ ու ժիր, կ'արտաշնչեն կորով,
Ու կը պարեն արբշիւ, ըզգայնութեանց թափով,
Օղանոյշներ՝ անմահ՝ որ կը տանիք պահն այս
Միջոցներէն անհուն դէպի դարերն անհաս:

Օրհնեալ՝ ըլլաք բառեր, որ ներշնչման ակէն՝
Երկարեցիք ձեռքիս ձեր բաժակն ոսկեղէն
Եւ դունդ ի դունդ Եկաք բանականութեւ պէս յաղթ՝
Ձերբադատել հողիս տառապանքէն իր բարդ...:

~ ~ ~

Բ Ո Յ Ր Ե Ր Ո Ւ Ս Տ Ե Ղ Ն Ա Շ Ա Ր

Բոյրե՛ր, բոյրե՛ր, ջերմ, հոգեյոյզ, մըտերիմ,
Դուք՝ ճամբաներն յիշատակի թեւերուն,
Ձեզ ըմպելով, շնչելով թող վերապրիմ
Իմ երջանիկ՝ այլ վաղ թօշնած մանկութիւնն...

Բո՛յրը տունին ուր շնչեցին, չարժեցան
Շողերու պէս քաղցր ու թեթեւ հողիներ,
Սիրելիներ որ կ'ապրէին ու չըկան..
Բայց բոյր մ'ահա կը յամենայ մահաստուեր

Սէւ ծալքին մէջ ըզգեստի մը թողլըքուն...:
Բո՛յրը դրքին որ էջ առ էջ կը պահէ
Պահն սպրբաժ. գողտըր ծաղիկ մ'երազուն,
Ձեւը ձեռքի մ'անտես, հոտովն յամպարէ:

Բո՛յրը մուխին ծխնելոյցէն դիւղական,
Շունչն ալիքին՝ ծաղիկներով գիրկընդխառն,
Ամբարներու, մառաններու եւ աշնան
Ողին՝ միւրեք, պարտէզներու պէս բուրեան:

Բոյրը հացին՝ փուռին ծոցէն օրհնացիր՝
Իբրեւ խոստումն ոյժին, կեանքին՝ կը սլանայ
Օղէն առկախ սեղանի պէս մեղրալիր,
Սեղան՝ որ միտքն ուրախութեան կը բանայ:

Ծովերու խորն ապրող բոյսին աղի շո՛ւնչն,
Անդունդներու սարսափն հոտի վերածուած,
Ճամբորդութեանց, վերյուշերու միշտ թարմ փունջն՝
Բոյրե՛ր, ճիւղ մը յամիկ՝ կածան ալգամած:

Հոտն այծեամբին պուրակներէն հեռակայ
Որ գինովի կը վերածէ շունն որսի,
Մեղուն արբշիւ մեխակին չուրջ կը խայտայ,
Սոխակն անբուն որ վարդին դէմ կը ծիւրի...

Օ՛ր կնդրուէի, խուենկի բոյրե՛րն հոսանուտ,
Ողիներու ալցելութիւնն ի տաճար,
Դուք վերապրող ձեւի մասնիկ, անկորուստ,
Դամբաններէն յառնող դէմքեր անվրթար,

Բոյրե՛ր, բոյրե՛ր, ներկայութիւն անհամար....:

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ

Մ Ա Ր Գ Ն Ո Ւ Ծ Ո Վ Ը

Բա՛րդ անկաշկանդ, պիտի սիրես՝ս դուն ծովը միշտ,
Ծովն՝ հայելին է հողիդ, ուր դուն ինքզինքդ
Կը դիտես. մինչ ալիքներուն դէմ ծաւալուն՝
Վիճը մտքիդ նոյնքան խոր է, նոյնքան անհուն:


Քու բերկրանքդ է սուղուիլ քո՛ւ իսկ պատկերիդ ծոց,
Եւ դայն դրկել ակնարկներովդ, բազուկներով,
Մինչ կը մոռնայ սիրող իր թնդի՛ւնը տրամակոծ՝
Անոր անյաղթ ու վայրենի տրտունջքին քով:

Գաղտնապահ էք դուք երկուքդ ալ, մրոտյաւած.
Ոչ ոք չափեց վիճը մտքիդ, Մա՛րդ արարած,
Ինչպէս որ Ծո՛ւվ, ոչ ոք ճանչցաւ քու ալ դանձեր.
Ձեր դադանիքներն ունին ա՛յնքան անյայտ ծալքեր:

Բայց եւ այնպէս, ահա բազում, անթիւ դարեր
Որ կը կռուիք անխրդճօրէն եւ անմորմոք.
Եւ այնքան բո՛ւռն դուք կը սիրէք մահն ու աւեր...
Յաւէտ ըմբի՛չ՝ ո՛վ եղբայրներ դուք անողոք....:

CHARLES BAUDELAIRE

Թրգմ. ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ



ԱՆԿՂՕ - ՍԻՐՕ - ԹՐԴՕ - ԻՐԱՔՕ...

Ահաւասիկ անճոռնի եւ անճաշակ բար-
դութիւններու նմոյշներ. բոլորն ալ քե-
րականօրէն խորթ ձեւեր, եռանդով որդե-
գրուած՝ կարգ մը թերթերու խմբագիր-
ներէն (Արարատ, 27. 3. 55: Զարթօնք,
13. 2. 55, եւն. եւն...):

Բարդելու ճոխ կերպեր ունին հայերէ-
նի մէջ՝ ա, ու, եւ յօդակապերը դործա-
ծելով. ինչո՞ւ երթանք օտար ձեւեր մու-
րալու: Յետոյ ի՞նչ են այդ Անկիւո եւ Սիւր-
բառերը. Անկիւոն ինչո՞ւ գ-ով չէ գրու-
ած. Սիւրիա բառը ի՞նչպէս Սիւր կը
դառնայ: Կ'երեւի Արարատի խմբագիրը
երդում ըրած է չար-արատներէն դրել:

Մէկը կը գրէ՝ Իրաֆօ-քուրֆ. միւսը՝
Թրֆօ-իրաֆեան: Զէ՛ր բաւեր ըսել՝ Իրա-
ֆեքսքուրֆ. եւ ասոր նման՝ Անգլիքիւրաֆ,
Թուրքիքիւրաֆ, Խալուգիւրաֆ եւն...:

Մեր խմբագիրներուն մէջ, դժբախտա-
բար, կան անձեր՝ որ աւելի կ'աղարտեն
ու կ'աղճատեն մեր լեզուն, քան կը շինեն:

ՅԱՐՏԱՔՈՒՍՏ

Աշխարհաբարի համար ուրիշ խորթ ձեւ
մըն ալ ասիկա. Յարտաֆուտ (Մասիս,
17. 2. 55, էջ 3, սիւնակ ա.): Կը բաւէ
ըսել ու գրել պարզապէս՝ արտաֆուտ:

Նախ, որովհետեւ գրաբարի մէջ ալ ար-
տաֆուտ է. օրինակներն այնքան շատ են,
որ հարկ չկայ նոյնիսկ թուել: Երկրորդ,
եթէ գրաբարի մէջ գրուէր իսկ յարտա-
ֆուտ յ-ով, աշխարհաբարի մէջ պիտի
յապաւէինք նախդիրը, եւ պիտի գրէինք
պարզապէս արտաֆուտ. ինչպէս չենք գը-
րեր ի ներֆուտ, այլ ներֆուտ, թէեւ գը-
րաբարի մէջ կ'ըսուի ի ներֆուտ:

ՎԱՍՆ ԿՐՕՆԻ ԵՒ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Վարդանանց տօներու առիթով, զրեթէ
բոլոր թերթերուն մէջ ալ այս վերնագիրը
կը տիրէ. վասն կրօնի եւ հայրենեաց:
Հանդիսաւորութիւն տալու համար՝ մեր
խմբագիրները կը սիրեն երբեմն գրաբար
պատգամներ տալ. դժբախտաբար լաւ
գրաբար գիտցողները՝ ճրագով փնտռելու
է:

Եթէ իրօք գրաբար կը գրեն, ըսելու են՝
վասն կրօնի եւ հայրենեաց: Ինչպէս հայ-
րենիք բառը՝ սեռականի մէջ հայրենեաց
կ'ըլլայ, կրօնք բառն ալ կրօնից կ'ըլլայ:
Ձեմ հասկնար ինչո՞ւ այսքան պատիւ
հայրենիքին, մինչ կրօնքը անդին խեղան-
դամ կը ներկայանայ. ու ասիկա՝ ճիշտ
Վարդանանց կրօնական դիւցազնամարտի
յիշատակին օրով:

Իսկ եթէ աշխարհաբար պիտի գրեն,
թո՛ղ պարզապէս գրեն՝ կրօնի եւ Հայրե-
նիքի համար. եւ որքան կ'ուզեն՝ մեծ տա-
ռերով. ա՛ս ալ նոյնքան վսեմ է եւ աղղու:

ՈՍԿԵՐԱՆՈՒԱԾ ԾԱԾԿՈՅԸ

Թերթերուն մէջէն լեզուական սխալներ
հաւաքելու համար՝ հարկ չկայ մանրա-
մասնօրէն տող առ տող կարդալ ու պըր-
պըրել. վերնագիրներն իսկ յաճախ սխա-
լերէն են, ինչպէս վերոյիշեալը:

Գողտրիկ պատմուածք մըն է, անճոռնի
վերնագրով (Տե՛ս Զանաւէր, 1955, թ. 3,
էջ 68):

Հեղինակը, կամ աւելի ճիշտ՝ թարգ-
մանիչը, բողոքական Վերապատուելի մըն
է, որ յաճախ կարդացած է Աստուածա-
շունչը. չէ՞ հանդիպած այնտեղ ոսկե-
հուռ, ոսկեմամուկ, ոսկեման գեղեցիկ
բառերուն, որոնց մէջ ճաշակի դրոշմը
կայ Ս. Սահակին ու Մեսրոպին:

Ի սէր «Մեծաւանգ»ին, թղթանոց նե-
տեցէք սա ոսկեբանուած անճաշակ ու հա-
սարակ բառը: